ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

14 հուլիսի 2026թ. թիվ 746

Ռ.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ
Ս.ԱՍՐՅԱՆԻՆ ՕՁՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանի 2026 թվականի հուլիսի 13-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռուզաննա Պողոսյանին, գլխավոր մասնագետներ Նաիրա Համբարձումյանին և Սվետլանա Ասրյանին ս/թ հուլիսի 14-ին մեկ օրով գործուղել Օձուն համայնք՝ «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ում մշտադիտարկում կատարելու և խնամատար ընտանիքներում հոգեզավակների խնամքի վերահսկողություն իրականացնելու նպատակով:

2. Գործուղումն իրականացնել «ВАЗ 21154, 2012թ.» մակնիշի 610 CP 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռուզաննա Պողոսյանին, գլխավոր մասնագետներ Նաիրա Համբարձումյանին և Սվետլանա Ասրյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

7/14/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. հուլիսի 14
ք.Վանաձոր